Արդյոք համայնքային որոշումների կայացման գործընթացները ներառական են հաշմանդամություն ունեցող անձի համար

հետազոտական զեկույց



Արդյո՞ք համայնքային որոշումների կայացման գործընթացները ներառական են հաշմանդամություն ունեցող անձի համար

հետազոտական զեկույց

© Փոփոխություն

Երեւան
2023

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

EaP | Eastern Partnership

Փոփոխություն

Զեկույցի նպատակն է՝

- ⇨ վերհանել Հայաստանում համայնքային որոշումների կայացման հիմքում ընկած իրավական կարգավորումների եւ պրակտիկայի այն խնդիրները, որոնք խոչընդոտում են հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցությունը,
- ⇨ ներկայացնել վերհանված հիմնախնդիրների հաղթահարման առաջարկներ:

Ինչպես խոչընդոտները, այնպես էլ առաջարկվող լուծումները ներկայացված են՝ հիմնվելով Հայաստանի խմբային տներում բնակվող անձանց փորձառության, մոտեցումների, միջազգային եւ տեղական իրավակարգավորումների ուսումնասիրության վրա:

Զեկույցը պատրաստվել է՝

«Հայաստանում խմբային տներում ապրող մարդկանց իմաստալից մասնակցայնությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցում տեղ գտած դիրքորոշումներն արտահայտում են միայն հեղինակների մոտեցումները, եւ պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպական միության տեսակետները:

Զեկույցից որեւէ հատված օգտագործելու եւ (կամ) մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում Հայաստանի խմբային տներում բնակվող անձանց՝ ժամանակ տրամադրելու եւ իրենց փորձառությամբ կիսվելու համար

Ձեկույցի հեղինակներ՝

Գոհար Խաչատրյան
Ստելլա Չանդիրյան

Շապիկը եւ ձեւավորումը՝
Աստղիկ Փիրումյանի

Տպագրությունը՝
«ՁարտՊրինտ» ՍՊԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Հետազոտության մասին 7

Ի՞նչ է տեղական ինքնակառավարումը 15

Ի՞նչ պարտականություններ ունեն տեղական ինքնակառավարման մարմինները հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների ապահովման գործընթացում 20

Ի՞նչ է համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը 35

Ամփոփում. վերհանված հիմնախնդիրներ եւ առաջարկներ 49

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք Հայաստանում համայնքային որոշումների կայացման գործընթացը ներառական է հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:

Այս հարցի պատասխանն է նկարագրված զեկույցում՝ հիմնվելով մի կողմից հոգեկան եւ (կամ) մտավոր խնդիրներ ունեցող անձանց փորձառության ուսումնասիրության, մյուս կողմից՝ թեմայի իրավական շրջանակի վերլուծության արդյունքների վրա:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով (Կոնվենցիա)[1] Հայաստանը պարտավորություն է ստանձնել ապահովել եւ օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների լիակատար իրականացմանը, այդ թվում՝ անկախ ապրելու եւ համայնքում ներառվելու իրավունքը, քաղաքական եւ հասարակական կյանքին մասնակցությունը:

Համայնքային որոշումների կայացման գործընթացի ներառականության ապահովումը՝ տեղեկատ-

[1] Կոնվենցիան հասանելի է հղմամբ՝ https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=IV-15&chapter=4&clang=_en

վությունից մինչեւ ընթացակարգեր, մոտեցումներից մինչեւ գործունեության պրակտիկաներ, հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց մի շարք իրավունքների իրացման երաշխիք է:

Սահմանադրությամբ եւ օրենքներով երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը, սակայն այս առումով բացեր են առկա ինչպես ներպետական իրավական կարգավորումներում, այնպես էլ պրակտիկայում:

Վերջինիս մասին իրենց փորձառությամբ են կիսվել Հայաստանում գործող 4 խմբային տների բնակիչները, ներկայացրել այդ գործընթացում առկա խոչընդոտներն ու դրանց հաղթահարման իրենց մոտեցումները:

Զեկույցը կարող է նպաստել համայնքային որոշումների կայացման գործընթացների ներառականության խոչընդոտների վերհանմանն ու դրանց հաղթահարման ուղղությամբ առաջարկների վերաբերյալ քննարկումների ծավալմանը, ինչպես նաեւ հիմք դառնալ համատեղ գործողությունների իրականացման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զեկույցի կազմման հիմքում ընկած են «Արդյո՞ք համայնքային որոշումների կայացման գործընթացները ներառական են հաշմանդամություն ունեցող անձի համար» սոցիալական հետազոտության արդյունքները (իրականացվել է որակական հետազոտություն):

Հետազոտական աշխատանքներն ընդգրկել են 2023 թվականի մարտից հունիսն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակում իրականացվել է՝

1-ին փուլ

փաստաթղթերի ուսումնասիրություն.

վերլուծվել են միջազգային եւ տեղական իրավակարգավորումներն ու այդ հիմքով կազմվել են՝

- ✓ տեղական ինքնակառավարման մարմիններին, ոլորտային գերատեսչություններին ուղղված տեղեկատվական հարցման հարցաթերթերը (4 տեղեկատվական հարցում՝ 4 տեղական ինքնակառավարման մարմիններին, 1 տեղեկատվական հարցում՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը),
- ✓ զեկույցի նկարագրողական, տեղեկատվական հատվածները,

- ✓ խմբային տների բնակիչների եւ անձնակազմի հետ հարցման հարցաշարերը, հարցերի ուղղությունները:

2-րդ փուլ

հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց փորձառության ուսումնասիրություն.

քննարկվել են անձանց՝

- ✓ համայնքային որոշումների կայացման վերաբերյալ մոտեցումները,
- ✓ համայնքային որոշումների կայացման մասնակցության փորձառությունը՝ հնարավորություններն ու խոչընդոտները,
- ✓ հնարավորությունների ամրապնդման եւ ընդլայնման, վերհանված խոչընդոտների հաղթահարման նպատակով առաջարկվող եղանակները:

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի 4 խմբային տներում (հետազոտության նախագծման ժամանակահատվածում Հայաստանում գործել են 4 խմբային տներ, որտեղ բնակվում են հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող 48 չափահաս անձինք):

4 խմբային տներն են՝

- ↳ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի 3 խմբային տները, որոնք գտնվում են Արարատի մարզի

Գեղանիստ գյուղում (Մասիս համայնք), Կոտայքի մարզի Առինջ գյուղում (Աբովյան համայնք) եւ Սիլիկյան թաղամասում (Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջան),

- «Խնամք» ՀԿ-ի Սպիտակի խմբային տունը (խնամքի տունը), որը գտնվում է Լոռու մարզի Սպիտակ քաղաքում (Սպիտակ համայնք):

Հարկ է նշել, որ Սպիտակի խմբային տունը հիմնվել է որպես փոքր խնամքի տուն[2], սակայն ներկայումս այն ֆինանսավորվում է որպես «հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք համայնքահենք փոքր խմբային տներում»[3] պետական դրամաշնորհային ծրագրի միջոցով:

Հենց այս հիմքով էլ Սպիտակի խմբային տունը ընդգրկվել է հետազոտության ընտրանքում, Սպիտակի խմբային տան բնակիչները մասնակցել են հարցմանը, իսկ զեկույցի շրջանակում այն դիտարկվում եւ անվանվում է խմբային տուն:

---

[2] Տեղեկատվությունը՝ ըստ առանցքային տեղեկատուների հետ հարցման արդյունքի:

[3] ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, «Խնամք» ՀԿ, ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների իրականացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների դրամաշնորհի ձեւով տրամադրվող ֆինանսական աջակցության պայմանագրի կատարման մասին արձանագրություններ, հասանելի է հղմամբ՝
https://www.mlsa.am/?page_id=39827(opens%20in%20a%20new%20tab

Ինչո՞ւ են շեշտադրվել խմբային տները

Հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունն անհնար է ապահովել խնամքի եւ հոգեբուժական հաստատություններում, որտեղ անձինք մեկուսացվում են համայնքից, զրկվում իրենց իրավունքներն ու ազատություններն իրացնելու հնարավորությունից: Հենց այդ հաստատություններում է Հայաստանում շարունակվում մեծ մասամբ կազմակերպվել հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի տրամադրումը[4]:

Միջազգային պրակտիկայում այս հիմնախնդրի լուծման եղանակն ապաինստիտուցիոնալացումն է: Այս համատեքստում Հայաստանում առաջարկվող հիմնական այլընտրանքային մոդելներից է խմբային տունը, մասնավորապես պետական քաղաքականությունը միտված է խմբային տան մոդելի ընդլայնմանը[5]:

Խմբային տունը համայնքահենք մոդել է, որտեղ աշխատակիցների գործունեությունն ուղղված

[4] Գոհար Խաչատրյան, Ստելլա Չանդիրյան, «Խմբային տները ՀՀ հոգեկան առողջության ոլորտում. հիմնախնդիրներ եւ զարգացման հնարավորություններ» Հանրային քաղաքականության ինստիտուտ, 2022, հասանելի է հղմամբ՝ http://ipp.am/newsite/archives/1581

[5] Gohar Khachatryan, Deinstitutionalization in the Field of Mental Health in Armenia: Contemporary Issues, 2022, https://journals.ysu.am/index.php/bulletin-ysu-sociology/article/view/vol13_no2_2022_pp064-071

պետք է լինի բնակիչների առօրյա կյանքի հմտությունների, ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, ինչպես նաեւ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելուն, որպեսզի բնակիչներն անխոչընդոտ օգտվեն համայնքում առկա ծառայություններից[6]:

Իհարկե, կան խմբային տների տարբեր տեսակներ, սակայն բոլոր դեպքերում ընդհանրությունն այն է, որ խմբային տունը՝ լինելով համայնքահենք մոդել, պետք է ինտենսիվ աշխատանքներ իրականացնի՝ ապահովելու համայնքում բնակիչների ներառումը, եւ այդ առումով որեւէ արգելքներ կամ սահմանափակումներ չառաջացնի[7]:

Այսպիսով, խմբային տունը՝ որպես սոցիալական ծառայությունների տրամադրման յուրահատուկ մոդել, մի շարք հնարավորություններ եւ խոչընդոտներ կարող է առաջացնել բնակիչների՝ համայնքային որոշումների կայացման գործընթացում ներառման իրավունքի իրացման առումով: Հենց այս նպատակով են շեշտադրվել խմբային տները՝ վերհանելով առաջարկներ, որոնք վերաբերում են հենց խմբային տան մոդելին:

---

[6] T. J. Peterson, Healthy Place, 2019, https://www.healthyplace.com/other-info/mental-illness-overview/finding-group-homes-for-mentally-ill-adults
[7] Mental Health America, Types of Housing, https://www.mhanational.org/housing

Հարկ է նշել, որ այս թեման Հայաստանում դեռեւս չի ուսումնասիրվել[8] որեւէ հետազոտությամբ, ուստի հետազոտությունն ավելի շատ հետախուզական-բացատրական[9] բնույթ ունի: Հաշվի առնելով նաեւ բյուջեի սղությունը՝ հետազոտությունը սոցիալական հետազոտություն է եւ նպատակ ունի նոր հետազոտական հարցեր վերհանել՝ հետագայում ավելի խորքային ուսումնասիրելու, գաղափարներ առաջարկելու ակնկալիքով:

Հաշվի առնելով այն, որ պետական քաղաքականությունը միտված է նոր խմբային տներ բացելուն, հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ոչ միայն գործող խմբային տների, այլ նաեւ նորաստեղծ խմբային տների համար:

Հետազոտության գործիքակազմը

Նախքան հետազոտության մեկնարկը, կազմվել են խմբային տների բնակիչների հետ իրականացվող

[8] Եթե դուք իրականացրել եք կամ տեղյակ եք իրականացրած հետազոտության մասին, խնդրում ենք change-armenia@protonmail.com էլեկտրոնային հասցեով կապ հաստատել մեզ հետ, քանի որ համատեղ կարող ենք քայլեր ձեռնարկել թեմայի զարգացման եւ պրակտիկ փոփոխություններ իրականացնելու նպատակով:

[9] Հետախուզական հետազոտությունները սոցիոլոգիայում կիրառվում են այն դեպքերում, երբ հետազոտող թեման դեռեւս այդքան էլ մանրամասն ուսումնասիրված չէ եւ նոր թեմա է հետազոտողի համար: Բացատրական հետազոտությունների դեպքում տրվում է ինչո՞ւ հարցի պատասխանը: Այս ուսումնասիրությունը 2 տարրերն էլ պարունակում է:

հարցազրույցի պլաններ, անձնակազմի հետ (տնօրեններ, փոխտնօրեն, խմբային տան համակարգող[10], սոցիալական աշխատող, սոցիալական սպասարկող, տնտեսվար, այլ) հարցման հարցաշարեր, որոնց միջոցով իրականացվել է հետազոտությունը:

Բոլոր հարցվող անձինք իրազեկված համաձայնություն են տվել իրենց կարծիքը զեկույցում ներառելու վերաբերյալ: Նրանց մանրամասն ներկայացվել է ծրագիրը, հետազոտության նպատակը, արդյունքների կիրառման եղանակը, հարցումից հրաժարվելու ընտրության հնարավորությունը:

Խմբային տներում բնակվում է 48 անձ: Նրանցից շատերը մասնակցել են հետազոտությանը (միայն 8 բնակիչ ցանկություն չի հայտնել մասնակցել հարցմանը): Այլ մանրամասներ չեն ներկայացվում՝ բնակիչների հնարավոր նույնականացումից խուսափելու նպատակով:

Հետազոտությանը մասնակցել են նաեւ խմբային տների անձնակազմի 9 ներկայացուցիչներ:

[10] Պատասխանատու է խմբային տան գործունեության կազմակերպման, կառավարման համար:

Առաջարկ ընթերցողին.

եթե ցանկանում եք թեմային առնչվող այլ հետազոտություն կամ զեկույցում նկարագրված հարցերի ավելի խորքային ուսումնասիրություն իրականացնել, եւ կարիք ունեք այս հետազոտության իրականացման հիմքում ընկած հետազոտական գործիքների, ապա կարող եք էլեկտրոնային փոստով կապ հաստատել մեզ հետ եւ մենք սիրով կկիսվենք այդ գործիքներով.

էլեկտրոնային փոստի հասցե՝
✉ change-armenia@protonmail.com

Ի՞ՆՉ Է ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Տեղական ինքնակառավարումը համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի (տեղական ինքնակառավարման մարմիններ) իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:[11]

Համայնք

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում իրականացվում է համայնքներում: Համայնքը 1 կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է, որը միաժամանակ նաեւ հանրային իրավունքի իրավաբանական անձ է[12]:

Իսկ ի՞նչ է համայնքն՝ ըստ խմբային տներում բնակվող անձանց (հարցվող անձ):

Համայնքն այն միավորումն է, որն ընդգրկում է՝

«համայնքի բնակիչները, հարեւանները, միջավայրի մարդիկ, այգին, տրանսպորտը, շենքերը, որոշում կայացնողները, խանութը, գրադարանը, աշխատավայրը, իրավապաշտպան կազմակերպությունները, պոլիկլինիկան…»

[11] ՀՀ Սահմանադրություն, հոդված 179, մաս 1, հոդված 181, մաս 1
[12] ՀՀ Սահմանադրություն, հոդված 180

Հարկ է նշել, որ հարցվող անձանցից երեքը ծանոթ չէին համայնք հասկացությանը, իսկ 18 անձինք դժվարացել են պատասխանել, թե որ համայնքում են բնակվում:

Չնայած ծրագրի ընթացքում իրականացվող իրազեկող հանդիպումներից հետո հարցվող անձանց մեծ մասն արդեն նշում է, թե որ համայնքում է բնակվում, սակայն այդ տեղեկատվությունն ամրապնդելու, ինչպես նաեւ զարգացնելու նպատակով կարիք կա պարբերաբար քննարկումներ կազմակերպել:

Համայնքի ավագանի եւ ղեկավար

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին ու ղեկավարը:

Համայնքի ավագանին կոլեգիալ ներկայացուցչական մարմին է, իսկ ղեկավարը՝ գործադիր:

Հայաստանում համայնքի ավագանուն ու համայնքի ղեկավարին ընտրում են 5 տարի ժամկետով: Մինչեւ 4000 ընտրող ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի ընտրություններն անցկացվում են մեծամասնական

ընտրակարգով, իսկ 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում՝ համամասնական ընտրակարգով[13]:

Համայնքի խնդիրներ

Համայնքի խնդիրները լինում են պարտադիր եւ կամավոր[14]: Պարտադիր են անվանում այն հանրային նշանակության խնդիրները, որոնց լուծմամբ ապահովվում է համայնքի բնականոն կյանքի ընթացքը: Կամավոր են համարվում այն խնդիրները, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքը ուղղակիորեն պայմանավորված չէ եւ կարող են իրականացվել միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Հարկ է նշել, որ թե՛ խմբային տների անձնակազմը, թե՛ բնակիչները տեղյակ չէին համայնքի պարտադիր եւ կամավոր խնդիրներից: Նրանց կողմից որպես հիմնական պատճառ է առանձնացվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրազեկման հանդիպումների բացակայությունը, ինչպես նաեւ անհրաժեշտ տեղեկատվության ոչ մատչելի լինելը:

---

[13] ՀՀ Սահմանադրություն, հոդված 181, «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք, հոդված 104.1, մաս 4 եւ 5
[14] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10

Մեջբերումներ՝ հարցվող անձանց կարծիքներից.

«...տելեվիզրով ոչ մի անգամ չենք լսել համայնքի մասին... կարան հաղորդումներ անեն...»

«...որ պարզ բաներ դնեն, կմտնենք էլ, կնայենք էլ ... դե որ վիդիոյով լինի էլի, ավելի լավ կլինի...»

«...իմը կնոպկեքով հեռախոս ա, շատ եմ ռադիո լսում, ... եթե ռադիոյով պատմեն կլսեմ էդ մասին...»

Ի՞ՆՉ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանում

Համայնքի *պարտադիր խնդիրներից է համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը*[15]:

Հետազոտության իրականացման ընթացքում տեղեկատվական հարցումներ են ուղարկվել Կոտայքի մարզի Աբովյանի, Արարատի մարզի Մասիսի, Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարաններ եւ Երեւանի քաղաքապետարան՝ հասկանալու, թե՝

- ⇨ վերջին 1 տարվա ընթացքում նշված համայնքներում առհասարակ ի՞նչ միջոցառումներ են իրականացվել համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանման ուղղությամբ, եւ
- ⇨ իրականացվե՞լ են արդյոք միջոցառումներ, որոնց ընթացքում համագործակցել են խմբային տների բնակիչների հետ:

Աբովյան համայնքից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերջին 1 տարվա ընթացքում Աբովյան համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանման ուղղությամբ միջոցառումներ չեն

[15] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, կետ 19)

իրականացվել: Չեն իրականացվել նաեւ միջոցառումներ «Ձերմիկ անկյուն» խմբային տան բնակիչների ներգրավմամբ:

Այս առումով, Աբովյան համայնքում գործող խմբային տան անձնակազմը նշում է, որ եղել է որոշակի շրջան, երբ համագործակցել են համայնքապետարանի հետ, սակայն դա ոչ թե համակարգային բնույթ է ունեցել, այլ պայմանավորված է եղել կոնկրետ աշխատակցի հետ համագործակցությամբ: Մասնավորապես, տվյալ աշխատակիցը պարբերաբար աջակցել է բնակիչների ծնողական օրերի կազմակերպման հարցերում, սակայն նրա աշխատանքից հեռանալուն պես, համայնքապետարանի հետ կապը, համագործակցությունը դադարել է:

Ենթադրաբար միջոցառումներ չեն իրականացվել նաեւ **Մասիս համայնքում**, քանի որ դրանց մասին տեղեկություն չի տրամադրվել: Փոխարենը՝ համայնքապետարանից տեղեկացրել են, որ *«Հաշմանդամություն ունեցող մարդիկ մշտապես գտնվում են համայնքապետարանի ուշադրության կենտրոնում...»*[16]:

Սպիտակ համայնքից ստացված տեղեկատվության համաձայն՝ տեղի է ունեցել հանդիպում հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական

[16] Մեջբերումը՝ տեղեկատվական հարցման պատասխանից:

կազմակերպությունների հետ՝ հավելելով, որ *«Բարեգործական ծրագրերի շրջանակներում հենաշարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամներին տրամադրվել են համապատասխան սարքավորումներ»*[17]*:* Անդրադառնալով խմբային տան բնակիչների ներգրավմամբ իրականացվող միջոցառումներին՝ համայնքապետարանից պատասխանել են. *«Սպիտակ քաղաքում խմբային տուն չունենք»:* Մինչդեռ Սպիտակի խմբային տան տնօրենը նշում է, որ լինում են դեպքեր, երբ համայնքապետարանը համագործակցում է խմբային տան հետ (օրինակ՝ հումանիտար աջակցություն են ցուցաբերում) այցելում են խմբային տուն (օրինակ՝ բնակիչների ծննդյան օրերին):

Ենթադրաբար այդ պատասխանը պայմանավորված է այն հանգամանքով, որ համայնքապետարանը Սպիտակում գտնվող խմբային տունը դիտարկում է որպես խնամքի տուն, սակայն ինչպես արդեն նշվել է, պետության կողմից այն դիտարկվում է որպես խմբային տուն եւ դրա չիմացությունը եւս փաստում է խմբային տներում ապրող անձանց՝ համայնքում ներառվելու իրավունքի ապահովման գործընթացում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ոչ բավարար համագործակցության մասին:

[17] Մեջբերումը՝ տեղեկատվական հարցման պատասխանից:

Երեւանի քաղաքապետարանի պատասխան գրությունն ամփոփում է հարցի առնչությամբ քաղաքապետարանի տարբեր վարչությունների եւ վարչական շրջանների պատասխանները, որոնց համաձայն՝

Սպորտի եւ երիտասարդության հարցերի վարչությունը տեղեկացրել է, որ նախատեսվում է իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց սպարտակիադա 6 մարզաձեւերից:

Զորահավաքային հարցերի եւ քաղաքացիական պաշտպանության վարչությունը նշել է, որ աղետների ռիսկերի նվազեցման եւ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումներում *«հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին կիրառվող նյութերը հարմարեցված լինելու վերաբերյալ պարբերաբար իրականացվում են քննարկումներ եւ առաջարկվում լուծումներ»*[18]*:*

Նշվածի առնչությամբ ինչպես Երեւանում, այնպես էլ մարզերում գործող խմբային տան թե՛ բնակիչները, թե՛ անձնակազմը նշել են, որ որեւէ միջոցառում չի իրականացվել՝ տեղեկացնելու արտակարգ

[18] Մեջբերումը՝ տեղեկատվական հարցման պատասխանից:

իրավիճակներում անհրաժեշտ գործողությունների մասին, ինչպես նաեւ չեն տեղադրվել տարհանման պլաններ: Ավելին, մինչ այս, խմբային տներին մոտ գտնվող ապաստարանների վերաբերյալ եւս քննարկումներ չեն ծավալվել:

Երեխաների եւ սոցիալական պաշտպանության վարչությունը նշել է, որ համագործակցում է մի շարք կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ ֆինանսավորում է այն կազմակերպությունների ներկայացված ծրագրերը, որոնք ծառայություններ են մատուցում հաշմանդամություն ունեցող անձանց:

Ինչ վերաբերում է վարչական շրջաններին, ապա *Էրեբունի վարչական շրջանում* անցկացվել է հաշմանդամություն ունեցող մարզիկների համայնքային առաջնությունը, *Արաբկիր վարչական շրջանում*՝ փողոցներում կառուցվել են թեքահարթակներ, նոր կառուցվող այգիներն ու բակային տարածքները կահավորվել են թեքահարթակներով, *Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում* իրականացված միջոցառումներում (տարեցների միջազգային օր, գիտելիքի օր, Ամանոր) ընդգրկվել են հաշմանդամություն ունեցող անձինք, *Դավթաշեն վարչական շրջանում* հաշմանդամություն ունեցող երեխաները ՀԿ համագործակցության շրջանակ-

ներում իրենց հանգիստն են անցկացրել ճամբարում, ինչպես նաեւ իրականացվել են ուղղորդումներ:

Հատկանշական է, որ **Աջափնյակ վարչական շրջանը**, որտեղ գտնվում է «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի խմբային տներից մեկը, որեւէ հարցի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրել՝ պատասխանելով, որ. *«Տեղեկատվությանը չի տիրապետում»*:

Անդրադառնալով ստացված պատասխաններին՝ կարելի է նշել, որ համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը կամ առհասարակ չի դիտարկվում որպես համայնքի պարտադիր խնդիր, հետեւաբար որեւէ գործողություն այդ ուղղությամբ չի իրականացվում (Աբովյան, Մասիս) կամ այն դրսեւորվում է որպես որեւէ աջակցության տրամադրում, առանձին միջոցառումների անցկացում եւ ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն (Սպիտակ, մասամբ՝ Երեւան): Առանձին դեպքում էլ (Արաբկիր վարչական շրջան) տարածքի ֆիզիկական մատչելիության ապահովմանն ուղղված գործողություններն են դիտարկվել որպես համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձի մասնակցության խթանում:

Օրենսդրական կարգավորումներ

Թեպետ «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներն առանձին հոդվածով չեն անդրադառնում, թե համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանման ներքո համայնքն ինչ հստակ գործողություններ պետք է կատարի, այնուամենայնիվ նույն օրենքի մի քանի այլ հոդվածներում անդրադարձ է կատարվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը: Մասնավորապես, նշվում է, որ՝

- ⇨ համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինի տեղեկություն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության առկա լուծումների վերաբերյալ[19],

Օրենսդիրը կրկին չի նշում, թե ինչ նկատի ունի հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության առկա լուծումներ հասկացության ներքո:

[19] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 5, կետ 21)

Տեղական ինքնակառավարման մարմինների համացանցային կայքերը մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձի համար

Տեղական ինքնակառավարման մարմինների համացանցային կայքերն ու դրանց բովանդակությունը պետք է լինեն ընկալելի, կառավարելի, հասկանալի եւ հուսալի՝ ապահովելով պաշտոնական կայքերից անարգել օգտվելը: Կայքէջերի մատչելիության բացակայությունը գործնականում անհնար է դարձնում հաշմանդամություն ունեցող անձի համար օրենսդրությամբ նախատեսված որեւէ տեղեկատվություն փնտրելը, ներբեռնելը կամ դրա բովանդակությանը ծանոթանալը:

⇨ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգն առնվազն պետք է սահմանի այն բավարար պայմաններն ու չափանիշները, որոնք անհրաժեշտ են գործնականում ապահովելու համայնքի բնակիչների իրազեկման եւ մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի եւ հարմար վայրերում՝ ապահովելով նաեւ համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը[20],

[20] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 7, կետ 2)

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը (եթե առկա է) մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձի համար

Սպիտակ համայնքի կայքէջում տեղադրված չէ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը[21]: Մասիս համայնքի կայքէջում տեղադրված է 2015 թվականին ընդունված կարգի[22] միայն սկանավորած տարբերակը, ինչն արդեն իսկ դժվարացնում է փաստաթղթի բովանդակությանը ծանոթանալը՝ անհնարին դարձնելով այդ փաստաթղթում նույնիսկ որոնում կատարելը: Սկանավորված տարբերակով է տեղադրված նաեւ 2022 թվականին ընդունված կարգը[23] Աբովյան համայնքի կայքէջում: Երեւանի քաղաքապետարանի կայքէջում թեպետ տեղադրված է 2014 թվականին ընդունված կարգի[24] տեքստային տարբերակը, այնուհանդերձ կարգը գտնելու գործընթացը մատչելի չէ. այն տեղադրված է ավագանու որոշումների պահոցում, ինչն էլ ենթադրում է, որ փնտրող անձն առնվազն պետք է իմանա, թե որ մարմնի կողմից եւ որ թվականին է այն ընդունվել, որպեսզի հնարավորինս «հեշտ» լինի այն գտնել:

⇨ համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության

[21] Տեղեկատվությունը՝ 2023 թվականի հուլիսի 20-ի դրությամբ
[22] Հասանելի է հղմամբ՝ https://masiscity.am/upload/Legislation/68-%d4%b1.pdf
[23] Հասանելի է հղմամբ՝ https://www.abovyan.am/upload/Legislation/%d5%a2%d5%b6%d5%a1%d5%af%d5%ab%d5%b9%d5%b6%d5%a5%d6%80%20%d5%ab%20%d5%b4%d5%a1%d5%bd%d5%b6%20%d5%af%d5%a1%d6%80%d5%a3.pdf
[24] Հասանելի է հղմամբ՝ https://www.yerevan.am/hy/elders-decisions/154-n/

բնագավառում սեփական լիազորությունների իրականացման ընթացքում ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման եւ մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի եւ հարմար վայրերում, ինչպես նաեւ ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց համար[25]:

Համայնքի բնակիչների իրազեկման գործընթացը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձի համար

Կայքէջերում տեղադրված հայտարարություններից կամ տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական էջերով ոչ մատչելի ձեւաչափով իրազեկումներից բացի փաստացի չի երաշխավորում այլ՝ գործուն, մատչելի ձեւաչափերի կիրառմամբ իրազեկման արդյունավետ մեխանիզմ:

Օրենսդրությամբ[26] տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ ուղղված՝

[25] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 37, մաս 1, կետ 2)
[26] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 2

- ⇨ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը եւ հաշմանդամության հիմքով խտրականության կանխարգելմանը,
- ⇨ հաշմանդամության հիմքով խտրականության ենթարկված անձանց իրավունքների եւ օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը,
- ⇨ հատուկ ժամանակավոր միջոցների կիրառմանը՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ փաստացի հավասարությանը հասնելու եւ նրանց հիմնարար ազատություններն ու իրավունքներն ապահովելու նպատակով:

Ավելին, հաշմանդամություն ունեցող *անձանց անկախ կյանքի եւ համայնքում ներառվելու իրավունքի* ապահովման նպատակով էլ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է իրականացնեն ծրագրեր եւ ծառայություններ, որոնք ուղղված են՝

- ⇨ հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական ներառմանը,
- ⇨ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն հաշմանդամություն ունեցող անձի մուտքն ու անգործունակ ճանաչելը կանխարգելելուն,

հաստատությունից համայնք վերադարձին աջակցելուն, համայնքահենք ծառայություններ մատուցելուն,

- ⇨ հաշմանդամություն ունեցող անձի եւ համայնքի իրազեկվածությանը,
- ⇨ անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ու այդ նպատակով անկախ կյանքի կենտրոնների ստեղծմանը,
- ⇨ հաշմանդամություն ունեցող անձի կամ անձանց խմբերի սեփական իրավունքների ջատագովման նպատակով հզորացմանը,
- ⇨ հաշմանդամություն ունեցող անձանց խորհրդատվական խմբերի աշխատանքը համակարգելուն,
- ⇨ անձի բնակության վայրի մատչելիության ապահովմանը,
- ⇨ անձնական օգնականի կամ ուղեկցողների ծառայությունների համակարգմանը:[27]

Չնայած օրենսդրությամբ նախատեսված այս կարգավորումներին՝ փաստացի որեւէ գործողություն չի իրականացվել Աբովյան, Երեւան, Մասիս եւ Սպիտակ համայնքներում, որը միտված կլիներ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ

[27] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 21, մաս 3

իրազեկվածության բարձրացմանը եւ (կամ) հաշ-մանդամության հիմքով խտրականության կան-խարգելմանը:

Այս առումով, հարցվող անձանցից մեկը նշում է. *«...համայնք որ ասում եմ, էն Կտոր մը Երկինքն եմ հիշում, որ ասում էին՝ համայնքը չի ընդունում... էդ ինչի՞ համայնքը չի ընդունում, ... գործ չեն անում էդ կարծրատիպերի դեմ...»*, *«...թե մեր իրավունքների մասին վիդիոներ անեն, ես էլ, մյուսներն էլ սիրով կնայենք, ... թող գոնե բրոշյուրներ սարքեն, բաժա-նեն...»:*

Տեղեկատվական հարցման տվյալներով՝ Աբովյան, Մասիս եւ Սպիտակ համայնքներում երբեւէ հա-մայնքի զարգացման ծրագրում չի ընդգրկվել որեւէ հարց հաշմանդամություն ունեցող անձանց եւ (կամ) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց առնչվող թեմաներով, իսկ Երեւանի 2023 թվականի զարգացման ծրագրում էլ ընդգրկվել է միայն հաշմանդամություն ունեցող անձանց իրա-վունքների եւ շահերի պաշտպանության, սոցիա-լական ներառմանն ուղղված ծրագրերի մշակման եւ իրականացման *անհրաժեշտությունը*:

Հատկանշական է, որ առկա իրադրության պայ-մաններում համայնքների մեծամասնությունը նույ-նիսկ կարիք չի տեսել իր կողմից մշակված տարբեր գործողություններն ու ռազմավարությունները հա-սանելի դարձնել հաշմանդամություն ունեցող ան-ձանց համար:

«Արդյո՞ք համայնքը կարիք ունի իր կողմից մշակված տարբեր գործողությունները, ռազմավարությունները հասանելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար» հարցին միայն Սպիտակ համայնքն է պատասխանել՝ «Այո»:

Մասիս համայնքը՝ «Միշտ պատրաստ է համագործակցության, որտեղ գերակա կլինի հանրային շահը», իսկ Աբովյան համայնքի համար՝ «Անհրաժեշտություն չկա»: Երեւանի քաղաքապետարանն էլ ինչպես եւ մի շարք այլ հարցերի, այդ հարցին եւս չի պատասխանել:

Խիստ մտահոգիչ է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ցուցաբերվող անտարբերությունն ու անգործությունը, ինչի համար նպաստավոր պայմաններ է ստեղծում նաեւ այն հանգամանքը, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի ընդունումից 2 տարի անց դեռեւս ներդրված չեն օրենքի կիրարկման գործուն մեխանիզմներ:

Ի՞ՆՉ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքի բնակիչների մասնակցություն

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը գործընթաց է, որի միջոցով բնակիչները, *առանց խտրականության*, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին եւ կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա[28]:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների եւ քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:

Համայնքի բնակիչներն ունեն *համայնքի գործերի կառավարման անմիջական մասնակցության իրավունք*[29], ինչը նշանակում է, որ համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:

Սահմանադրությունը համայնքի բնակիչների՝ համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցությունն ուղղակիորեն կապում է ընտրությունների (ընտրելու/ընտրվելու) եւ հանրաքվեների մասնակցության հետ:

---

[28] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 11, մաս 1
[29] ՀՀ Սահմանադրություն, հոդված 183, մաս 1

Սա միանշանակ չի ենթադրում, որ համայնքային կյանքի մասնակցությունը սահմանափակվում է այդ գործողություններով, սակայն դրանք դիտարկվում են որպես համայնքի գործերի կառավարման անմիջական կամ ուղիղ մասնակցության ձեւ:

Հատկանշական է, որ Սահմանադրությամբ ամրագրվում է ժողովրդի՝ ազատ ընտրությունների, հանրաքվեների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով իշխանության իրականացումը, սակայն միեւնույն ժամանակ Հայաստանում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք ընտրելու եւ ընտրվելու, ինչպես նաեւ հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն[30]:

ՀՀ Սահմանադրությունը խտրական է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի հանդեպ

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անգործունակ ճանաչված մարդը Հայաստանում չունի ընտրելու, ընտրվելու եւ հանրաքվեին մասնակցելու իրավունք, ինչը հակասում է մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին:

[30] ՀՀ Սահմանադրություն, հոդված 48, մաս 4

Յուրաքանչյուր անձ ամենուր օրենքի առջեւ որպես անձ ճանաչման իրավունք ունի, որը մարդու իրավունքների հիմնարար սկզբունք է եւ որից շեղում կամ վերապահում կատարել չի թույլատրվում անգամ արտակարգ իրավիճակների պայմաններում:

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց կոմիտեի
Կոնվենցիայի 12-րդ հոդվածի վերաբերյալ
թիվ 1 Ընդհանուր մեկնաբանություն

Անձի գործունակության սահմանափակման համար միայն հոգեկան առողջության խնդրի առկայությունը, անկախ դրա ծանրության աստիճանից, չի կարող բավարար լինել եւ արդարացնել գործունակության ցանկացած սահմանափակում:
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի լրիվ անգործունակ ճանաչելու միատեսակ մոտեցումն անընդունելի է: Նույնիսկ այն դեպքերում, երբ ներպետական մարմինների կողմից բավարար հստակությամբ հաստատվել է անձնական հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու հարցում անձի խնդիրների առկայությունը, գործունակության նույնիսկ մասնակի սահմանափակումը կարող է կիրառվել որպես ծայրահեղ միջոց միայն այն դեպքում, երբ բոլոր հնարավոր այլընտրանքների հաշվի առմամբ ներպետական մարմինները հանգել են եզրակացության, որ առավել նվազ սահմանափակումներ ենթադրող միջոցի կիրառումը ապարդյուն կլիներ: Ավելին, ցանկացած միջոցի կիրառությունն պետք է կրի ժամանակավոր բնույթ եւ ենթարկվի պարբերական վերանայման՝ կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում դրանց գործողությունը դադարեցնելու նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Լաշինն ընդդեմ Ռուսաստանի /Lashin v. Russia/, Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի /Shtukaturov v. Russia/, Իվինոնիչն ընդդեմ Խորվաթիայի /Ivinovic v. Croatia/, Ստանեւն ընդդեմ Բուլղարիայի /Stanev v. Bulgaria/

Մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին հակասող անգործունակության ինստիտուտի առկայության պայմաններում Հայաստանում շարունակվում է նաեւ այն խնդրահարույց պրակտիկան, երբ անգործունակ ճանաչված անձի խնամակալ են դառնում հաստատությունները, ինչն էլ ավելի է մեծացնում անձի կախվածություն այդ հաստատությունից:

Հարկ է նշել, որ Սպիտակի խմբային տանը բնակվող անձանցից հինգը ճանաչված են անգործունակ (երկու անձի գործունակություն վերականգնվել է, մեկ անձի գործունակության վերականգնումը ընթացքի մեջ է): *Անգործունակ ճանաչված երկու անձանց խնամակալն է խմբային տան տնօրենը:*

Պետությունը պետք է արգելի, որպեսզի հաստատությունների տնօրենները կամ կառավարիչները դառնան հաստատության բնակիչների խնամակալներ[31]:

Մատչելիություն

Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության առաջնային մակարդակն *առանց խտրականության* տեղեկատվության ստացումն է:

[31] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց կոմիտեի Կոնվենցիայի 19-րդ հոդվածի վերաբերյալ թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություն, հասանելի է հղմամբ՝ https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-comment-no5-article-19-right-live

Առհասարակ, մատչելիությունը (տարածքի, տեղեկատվության, տրանսպորտի, ծառայությունների, համակարգերի, տեխնոլոգիաների, այլ) հաշմանդամություն ունեցող անձի համար անկախ ապրելու եւ հասարակության մեջ հավասար մասնակցության նախապայմանն է[32]:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրված 4 համայնքներում ապահովված չէ տեղեկատվության եւ հաղորդակցության մատչելիությունը:

Այս խնդրի մասին նշել են նաեւ այն հարցվող անձինք, ովքեր երբեւէ մուտք են գործել համայնքի կայքէջ եւ (կամ) ֆեյսբուքյան էջ: Նրանց կողմից որպես խնդիր առանձնացվում է տեղեկատվության բարդ բովանդակությունը, որը չի ուղեկցվում ենթագրերով, տեսաձայնային նյութերով:

Զուգահեռաբար, առանձնացվում է նաեւ հարցվող անձանց մի մասի գրաճանաչ չլինելը՝ որպես խոչընդոտ:

Մասնակի է ապահովված նաեւ համայնքի վարչական շենքի ֆիզիկական մատչելիությունը:

[32] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց կոմիտեի Կոնվենցիայի 9-րդ հոդվածի վերաբերյալ թիվ 2 Ընդհանուր մեկնաբանություն, հասանելի է հղմամբ՝ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/033/13/PDF/G1403313.pdf?OpenElement

Ըստ տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրած տեղեկատվության՝ Աբովյանի, Մասիսի եւ Սպիտակի համայնքապետարանները մասամբ են հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ Երեւանի քաղաքապետարանը հարցի վերաբերյալ տեղեկատվություն առհասարակ չի տրամադրել:

Ընտրություններ

Հարցվող անձանց մեծ մասը մասնակցել է ընտրություններին: Նրանք նշում են, որ գործընթացը խտրական է այն անձանց համար, ովքեր գրաճանաչ չեն, եւ առաջարկում են ընտրաթերթիկներում տեղեկատվությունը զուգակցել պատկերներով:

Կարեւոր է արձանագրել, որ խմբային տներում բնակիչներից շատերի անձնագրերը պահվում են առանձին վայրում, որին մեծամասամբ բնակիչները կարող են հասանելիություն ունենալ միայն աշխատակցին հարցնելուց հետո, ինչպես նաեւ անձնագիրը ժամկետը երկարացնելու գործընթացում կամ որեւէ ծառայությունից օգտվելու պարագայում: Որպես հիմնավորում՝ խմբային տները նշում են, որ հնարավոր է բնակիչները կորցնեն կամ վնասեն անձնագիրը: Այս մոտեցումը ոչ միայն մարդու իրավունքներից բխող չէ, այլեւ խիստ մտահոգիչ է, երբ խմբային տները ձեռնարկում են այնպիսի գործողություններ, որոնք մեծացնում են անձանց կախվածությունը կառույցից:

Ավագանու հրապարակային նիստեր

Տեղեկատվության ստացման իմաստով կարեւորություն ունեն համայնքի ավագանու նիստերը, որոնք հրապարակային են, իսկ 3000 եւ ավել բնակիչ ունեցող համայնքներում այդ հրապարակային նիստերն առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում[33]:

Թեպետ տեղեկատվության եւ հաղորդակցության մատչելիության նպատակով տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ապահովեն մտավոր խնդիրներ ունեցող, հաշմանդամություն ունեցող անձանց համար պարզ եւ մատչելի ձեւով հաղորդակցվելու իրավունքը[34], այնուամենայնիվ *4 համայնքների պաշտոնական համացանցային կայքերում հեռարձակվող հրապարակային նիստերը մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձի համար. ապահոված չէ հեռարձակվող նիստերի ժեստերի լեզվով թարգմանությունը, առկա չեն ենթագրեր, բացակայում է նաեւ հրապարակմանը զուգահեռ՝ քննարկվող հարցերի վերաբերյալ մատչելի, հիմնական կետերն ամփոփող տեսա կամ ձայնային ձեւաչափով ներկայացվող տեղեկատվությունը: Մատչելի ձեւաչափով չեն նաեւ ավագանու նիստերի արձանագրությունները:*

---

[33] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16, մաս 8, 9
[34] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 4

Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնություն

Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության մեկ այլ հնարավորություն է համապատասխան քանակով ստորագրություններ ներկայացնելու դեպքում համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը[35]: *Վերջին 3 տարիների ընթացքում միայն Սպիտակ համայնքի բնակիչներն են 1 անգամ ավագանու նիստի օրակարգում ներհամայնքային տրանսպորտին վերաբերող հարց ընդգրկելու նախաձեռնություն ներկայացրել, իսկ մյուս 3 համայնքներում համանման նախաձեռնության որեւէ դեպք չի եղել:*

Այս հարցի առնչությամբ, բոլոր խմբային տների անձնակազմի անդամները եւ բնակիչներից շատերը նշում են, որ տեղյակ չեն եղել, որ կարող են համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ հանդես գալ: Նրանց մեծ մասը կարծում է, որ հարկ է ինստիտուցիոնալ մակարդակում փոփոխություններ իրականացնել, քանի որ հենց տեղական ինքնակառավարման մարմինը պետք է նախաձեռնողականություն դրսեւորի՝ մարդկանց հետ խոսելով, քննարկելով, տարբեր եղանակներով իրազեկելով,

[35] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 2

որպեսզի կառավարումն իսկապես լինի մասնակցային եւ համայնքի բնակիչների կարիքներից բխող:

Հանրային քննարկումներ

Խնդրային է հանրային քննարկումների վերաբերյալ տեղեկատվության ոչ հասանելի լինելը: Եթե նկարագրված նախորդ դեպքում կայքէջերում տեղեկատվությունն առկա է, սակայն ոչ մատչելի ձեւաչափով, ապա հանրային քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը կամ առհասարակ բացակայում է (Սպիտակ[36]), կամ խիստ թերի է (Աբովյան[37]), իսկ եթե նույնիսկ առկա է (Մասիս, Երեւան), ապա կրկին ներկայացված չէ մատչելի ձեւաչափով:

Հանդիպումներ

Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության կարեւոր գործիք է նաեւ հանրային հանդիպումների անցկացումը, երբ ավագանու անդամները հանդիպում են համայնքի բնակչության հետ եւ տեղեկացնում ավագանու աշխատանքների մասին, ինչպես նաեւ համայնքի ղեկավարն է իր լիազորությունների մասին իրազեկող հանդիպումներ ունենում:

[36] Տեղեկատվությունը՝ 2023 թվականի հուլիսի 20-ի դրությամբ
[37] Տեղեկատվությունը՝ 2023 թվականի հուլիսի 20-ի դրությամբ

Հարցվող անձինք նշում են, որ երբեւէ չի եղել, որ իրենց կարծիքը հարցնեն համայնքի մասին, կամ էլ իրենց առաջարկները՝ համայնքի բարելավման ուղղությամբ: Միայն Սպիտակի խմբային տանը բնակվող հարցվող անձինք են նշում, որ հանդիպել են համայնքապետարանից մարդկանց հետ, բայց հիմնականում դրանք եղել են ցուցահանդեսներ կամ նրանց կողմից այցելություններ՝ որեւէ հումանիտար աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Մեջբերումներ՝ հարցվող անձանց առաջարկներից.

«...իմ հետ ոչ մեկ չի խոսել համայնքից, որ գան խոսեն ես կասեմ, որ կարամ նկարչություն սովորացնեմ երեխաներին...»

«...ճանապարհին նստարաններ լինեն, որ մարդիկ հոգնեն, նստեն...»

«...համայնքում որ կարատե լինի, ես կսովորեմ, բայց փող չտամ էլի...բայց սովորեմ...»

«...որ ինձ հարցնեն, ես կասեմ էն Երեւանի կենտրոնի հեծանիվներից մեր մոտ էլ լինեն, մենք էլ քշենք... բասկետբոլի շիթ լինի, հեչ շատ փող պետք չի էտ անելու համար, բայց լիքը մարդ կզբաղվի օրվա մեջ կամ տուռնիկներ լինեն կամ ֆուտբոլի դաշտ»

«...գրադարանից գիրք ենք վերցնում կարդում... լավ կլինի, որ նոր գրքեր բերեն, մենք էլ կարդանք...»

Իրազեկվածության բարձրացում

Իրազեկվածության բարձրացումն առանցքային նշանակություն ունի իրավունքների լիարժեք իրացման տեսանկյունից:

Այդ գործընթացում կարեւոր է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության դերակատարումը, որը պետական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խմբային տներում բնակվող անձանց մատուցվող ծառայություններում կարող է հավելել իրազեկվածության բարձրացմանն

ուղղված գործողությունները: Արդյունքում՝ խմբային տների բնակիչները կիրազեկվեն իրենց իրավունքների վերաբերյալ՝ տեղեկանալով իրավունքների պաշտպանության կառույցների (իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ եւ խմբեր, մարդու իրավունքների պաշտպաններ, լրագրողներ, պետական եւ միջազգային մարմիններ, այլ), ինչպես նաեւ դիմելու ընթացակարգերի մասին:

Այդ առումով կարեւոր կլինի նաեւ ընդլայնել խմբային տների եւ իրավապաշտպան խմբերի, կազմակերպությունների միջեւ համագործակցությունը:

Իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործողություններում կարեւոր է նաեւ գրագիտության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում անձանց հմտությունների զարգացումը:

Այս առումով, հարկ է նշել նաեւ այն, որ հարցվող անձանցից շատերը չունեն այնպիսի հեռախոս, որով կարող են կայքեր մուտք գործել (հիմնականում *սմարթ* հեռախոսներ քիչ թվով բնակիչներ ունեն): Այս բացը «Ջերմիկ անկյուն» հիմնադրամը փորձ է անում լուծել բնակիչների համակարգչային գիտելիքներն ու հմտությունները զարգացնող հանդիպումների միջոցով: Այդ ուղղությամբ անհրաժեշտ թվով համակարգիչներ կան Երեւանում գտնվող խմբային տանը, սակայն մյուս 2 խմբային տներից յուրաքանչյուրում առկա է միայն 1 համակարգիչ, որն էլ աշխատակազմի համար է (մեկում՝ բնակիչներն էլ են կարողացել օգտվել):

Սպիտակի խմբային տանը նույնպես կա 1 համակարգիչ, որն ըստ հարցվող անձանց, բնակիչներից մեկին է պատկանում (հարցվող անձինք հասանելիություն ունենում են համակարգչին միայն այդ բնակչի համաձայնությամբ): Սպիտակի խմբային տան բնակիչները նույնպես առանձնացրել են համակարգչային գրագիտության զարգացմանն ուղղված հանդիպումների կարիք:

Ամփոփում. վերհանված հիմնախնդիրներ եւ առաջարկներ

Ամփոփում

Հետազոտական զեկույցի միջոցով վեր են հանվել այն համակարգային, իրավական եւ պրակտիկ խնդիրները, որոնք խոչընդոտում են հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցայնությունը համայնքային որոշումների կայացման գործընթացում:

Այդ խնդիրները հասցեագրվում եւ լուծման հնարավոր եղանակներ են ներկայացվում՝ հիմնվելով Հայաստանում գործող խմբային տների բնակիչների փորձառության, խմբային տների անձնակազմի տեսակետների, տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված տեղեկատվական հարցման պատասխանների, ինչպես նաեւ միջազգային եւ ներպետական իրավակարգավորումների վերլուծության վրա:

Հայաստանում ոլորտային բարեփոխումների՝ մասնավորապես ապաինստիտուցիոնալացման հեռանկարում, նախատեսվում է մեծ թվով խմբային տներ ստեղծել, ինչը, որպես համայնքահենք մոդել, կարեւոր օղակ կարող է դառնալ համայնքի եւ խմբային տան բնակիչների միջեւ: Որպեսզի խմբային տունը չդառնա ինստիտուցիոնալ հաստատություն, չսահմանափակի անձանց իրավունքների եւ ազատությունների իրացման հնարավորությունը, վերջնանպատակը պետք է լինի

անձանց համայնքում ներառումը եւ անկախ ապրելու հնարավորությունների խթանումը: Այս նպատակը մի կողմից խմբային տան՝ որպես առանձին մոդելի գործառույթների առանցքում պետք է դրվի, մյուս կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, համայնքային այլ ծառայությունների ներդրման:

Ձգտելով համայնքային որոշումների կայացման գործընթացի ներառականության ապահովմանը, խթանելով հոգեկան եւ (կամ) մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց համայնքում ներառվելու, համայնքային կյանքին մասնակցության եւ մի շարք այլ իրավունքների իրացմանը՝ ստորեւ ներկայացված են վերհանված հիմնախնդիրներն ու հաղթահարման առաջարկները:

Հիմնախնդիրներ իրավակարգավորումներում եւ համակարգային մակարդակում

Չնայած «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը սամանվում է որպես համայնքի պարտադիր խնդիր, սակայն դրա բովանդակության ներքո տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունների շրջանակը չի մեկնաբանվում: Արդյունքում՝ ցանկացած գործողու-

թյուն, որն որեւէ կերպ առնչվում է հաշանդամություն ունեցող անձանց հետ, ներկայացվում է որպես համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանմանն ուղղված գործողություն:

Չնայած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից ունեն մի շարք պարտականություններ, այնուհանդերձ փաստացի բացակայում են օրենքի կիրարկման գործուն մեխանիզմները:

Ներպետական իրավական համակարգը չի հրաժարվել անգործունակության ինստիտուտից եւ դրանով պայմանավորված մարդու հիմնարար իրավունքները խախտող ընթացակարգերից:

Շարունակվում է տարածված մնալ այն խնդրահարույց պրակտիկան, երբ անգործունակ ճանաչված անձի խնամակալ են դառնում հաստատությունների տնօրենները՝ էլ ավելի մեծացնելով անձանց կախվածությունը կառույցից:

Տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական համացանցային կայքերը եւ հրապարակվող ողջ տեղեկատվությունը մատչելի չէ

մտավոր եւ (կամ) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:

Ուսումնասիրվող տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի տարածքները մասամբ են մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Չկա որեւէ գործուն մեխանիզմ համայնքի բնակիչների իրազեկման գործընթացը մատչելի դարձնելու համար:

Չկան կրթական հնարավորություններ, օրինակ՝ մատչելի ձեւաչափերով կազմված առկա կամ առցանց դասընթացներ այն անձանց համար, ովքեր ցանկություն են հայտնում կրթական գիտելիքները զագացնելու (խմբային տների բնակիչների մի մասը գրաճանաչ չէ, եւ չնայած ցանկություն է հայտնում կրթական կարողությունները զարգացնելու, սակայն անհրաժեշտ դասընթացներ պետական մակարդակով նախատեսված չեն):

Ընտրության ընթացքում տեղեկատվությունը, ինչպես նաեւ ընտրաթերթիկները մատչելի չեն այն անձանց, ովքեր կարդալիս որոշակի դժվարություններ են ունենում:

Հիմնախնդիրներ պրակտիկայում

Չնայած համայնքի պարտադիր խնդիրներից է հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը, սակայն հետազոտվող համայնքներում այդ ուղղությամբ գործուն քայլեր, միջոցառումներ չեն իրականացվում:

Համայնքի կողմից չեն իրականացվում աղետների ռիսկերի նվազեցման եւ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները: Չկա համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների եւ խմբային տների միջեւ (սոցիալական, առողջապահական հարցեր, այդ թվում՝ դեղորայքի, անհրաժեշտ սննդի, այլ միջոցների պահպանման վերաբերյալ):

Որոշ տեղական ինքնակառավարման մարմիններ չեն կարեւորում եւ գործուն միջոցառումներ չեն իրականացնում իրենց կողմից մշակված տարբեր ռազմավարությունները, գործողությունները հաշմանդամություն ունեցող անձանց, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար հասանելի եւ մատչելի դարձնելու ուղղությամբ:

Որոշ համայնքներում բացակայում է համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների եւ խմբային տների միջեւ, իսկ համա-

գործակցության դեպքում՝ չի կրում ինստիտուցիոնալ բնույթ (կամ պայմանավորված է որեւէ աշխատակցով, եւ աշխատակցի փոփոխությունից համագործակցությունն ընդհատվում է, կամ սահմանափակվում է միայն հումանիտար աջակցությամբ, ծնողյան օրերին քաղցրավենիք ուղարկելով, ցուցահանդեսներին հրավիրելով, այլն):

Սպիտակ համայնքի պաշտոնական կայքէջում տեղադրված չէ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, իսկ Աբովյան, Մասիս համայնքներում եւ Երեւան քաղաքում տեղադրված են ոչ մատչելի ձեւաչափով:

Որոշ խմբային տներում չկան անհրաժեշտ տեխնիկական հնարավորություններ՝ համակարգիչներ, հեռախոսներ՝ համացանց մուտք գործելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար:

Համակարգչային գրագիտության զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը՝ խմբային տներից մեկի հարցվող անձանց կողմից ամենից շատ նշված կարիքն է:

Խմբային տներում բնակիչներից շատերի անձնագրերը պահվում են առանձին վայրում:

Հարցվող անձանց իրազեկվածությունը ցածր է համայնքային որոշումների կայացման գործընթացի, տեղական ինքնակառավարման մարմիններին

գործունեության, դրանցում ներառման եւ մասնակցության հնարավորությունների մասին,

Առաջարկներ ՀՀ կառավարությանն ու ոլորտային նախարարություններին

⇨ Մշակել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգերի կիրարկման մեխանիզմներ՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունների ապահովմանը:

⇨ Համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ աջակցելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման եւ հաշմանդամության հիմքով խտրականության կանխարգելման նպատակով:

⇨ Վերանայել անգործունակության ինստիտուտին վերաբերող օրենսդրական կարգավորումները՝ հրաժարվելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի լրիվ անգործունակ ճանաչելու մոտեցումից:

⇨ Մինչ անգործունակության ինստիտուտի համակարգային փոփոխությունները՝ հրաժարվել այն պրակտիկաներից, որոնք խրախուսում են խմբային տան՝ «խնամակալի» կարգավիճակը:

⇨ Զարգացնել միջգերատեսչական եւ միջոլորտային համագործակցությունը, Աշխատանքի

եւ սոցիալական հարցերի նախարարության եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ համագործակցությունը:

⇨ Վերանայել ընտրության ողջ գործընթացի՝ ներառյալ ընտրաթերթիկների մատչելիության ապահովման հիմնահարցերը:

⇨ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի եւ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունների համագործակցությամբ մշակել այլընտրանքային առցանց դասընթացներ՝ ապահովելով այդ դասընթացների մատչելիությունը, որից կարող են օգտվել չափահաս այն անձինք, ովքեր ցանկություն ունեն գրաճանաչ դառնալու կամ այս առումով գիտելիքները զարգացնելու:

⇨ Գրաճանաչությանն ուղղված գործողությունների եւ մասնագիտական միջամտությունների, իրավունքների եւ ազատությունների, համայնքին առնչվող թեմաների շուրջ քննարկումների կազմակերպումը դարձնել պահանջ՝ խմբային տներին տրամադրվող դրամաշնորհային ծրագրերում եւ մոնիթորինգային ցուցանիշներում:

Առաջարկներ տեղական ինքնակառավարման մարմիններին

⇨ Դարձնել օրակարգային հաշմանդամություն ունեցող անձանց համայնքի հասարակական կյանքի մասնակցության խթանմանն ուղղված համալիր գործողությունների իրականացումը:

⇨ Խմբային տների հետ քննարկել համագործակցության հեռանկարները, սահմանել համագործակցության համակարգային մեխանիզմներ՝ ներառելով խմբային տների բնակիչների տեսակետների ուսումնասիրությունն ու առաջարկների քննարկումը, որի հիմքով՝ գործողությունների իրականացումը:

⇨ Քննարկել աղետների ռիսկերի նվազեցման եւ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նախագծման եւ իրականացման ընթացքում հաշամանդամություն ունեցող անձանց կարիքների հանդեպ զգայունության ապահովման հարցերը, քայլեր ձեռնարկել դրանց ապահովման ուղղությամբ: Իրականացնել այդ միջոցառումները համայնքի բոլոր բնակիչների՝ ներառյալ խմբային տների բնակիչների համար: Սա վերաբերում է նաեւ ապաստարաններին առնչվող հարցերի վերհանմանն ու համատեղ լուծումների մշակմանը եւ իրականացմանը:

⇨ Քննարկել եւ ներդնել համայնքի բնակիչների իրազեկման գործընթացի մատչելիության ապահովման գործուն մեխանիզմներ:

⇨ Բնակիչներին շարունակաբար իրազեկել համայնքի պարտադիր եւ կամավոր խնդիրների, համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորության եւ իրավունքի մասին՝ կիրառելով հաղորդակցության մատչելի եղանակներ:

⇨ Իրազեկման հանդիպումներն իրականացնել ինչպես դեմ առ դեմ, այնպես էլ առցանց հարթակների միջոցով՝ համագործակցելով լրատվամիջոցների լայն շերտերի հետ, մասնակցելով հեռուստահաղորդումների, ռադիոհաղորդումների, այլ:

⇨ Ապահովել ավագանու հեռարձակվող նիստերի ժեստերի լեզվով թարգմանությունը, ենթագրերի առկայությունը, քննարկվող հարցերի վերաբերյալ մատչելի, հիմնական կետերն ամփոփող տեսաձայնային ձեւաչափով ներկայացվող տեղեկատվությունը, ավագանու նիստերի արձանագրությունները:

⇨ Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը տեղադրել տեքստային տարբերակով, մատչելի տարբեր ձեւաչափերով, կայքէջի տեսանելի վայրում:

⇨ Գործուն քայլեր ձեռնարկել՝ տեղական ինքնակառավարման մարմնի ողջ տարածքի ֆիզիկական մատչելիության ապահովման ուղղությամբ:

Առաջարկներ խմբային տներին

⇨ Համայնքի մասին քննարկումները դարձնել շարունակական եւ պարբերական բնույթ ունեցող:

⇨ Մասնագիտական միջամտության (հատկապես սոցիալական աշխատողների գործունեության) ուղղություններից մեկը նախատեսել գրաճանա-

չությանն ուղղված գործողությունների իրականացումը: Հաշվի առնելով հնարավոր դժվարությունները, որոնք առանձնացվել են հարցվող մասնագետների կողմից՝ նախատեսել միջամտության այլընտրանքային եղանակների կիրառումը, որպեսզի առավելագույն պայմաններ ստեղծվեն՝ բնակիչների կրթական հնարավորությունների առավելագույնս իրացման նպատակով:

⇨ Կազմակերպել համակարգչային գրագիտության դասընթացներ (կամ համագործակցել համայնքում այլ պետական եւ ոչ պետական կազմակերպությունների հետ, որտեղ բնակիչները կարող են զարգացնել այդ առումով գիտելիքները եւ կարողությունները): Հնարավորության դեպքում ապահովել համակարգիչների վերանորոգումը կամ նորերի ձեռքբերումը:

⇨ Իրազեկող հանդիպումների միջոցով բնակիչներին ներկայացնել անձնագրի, անձնագիրը պահպանելու կարեւորությունը, վերադարձնել անձնագրերը բնակիչներին ու այս առումով զարգացնել բնակիչների գիտելիքներն ու կարողությունները:

⇨ Զարգացնել համագործակցությունն իրավապաշտպան խմբերի ու կազմակերպությունների հետ:

Վերոնշյալ հիմնախնդիրների նկարագիրը տալիս է այն հարցի պատասխանը՝ արդյո՞ք համայնքային

որոշումների կայացման գործընթացը ներառական է հաշմանդամություն ունեցող անձի համար:

Հատկանշական է, որ հենց հարցմանը մասնակցած անձինք են նշում վերհանված հիմնախնդիրների հաղթահարման հնարավոր եղանակները, առաջարկում լուծումներ:

Այսպիսով, այս սոցիալական հետազոտական զեկույցը չի հավակնում շատ խորքային տեղեկատվություն տրամադրել հետազոտական հարցի վերաբերյալ, սակայն

- ✓ վերհանված հիմնախնդիրներն ու դրանց լուծման առաջարկները կարող են մեկնարկային դառնալ թեմայի վերաբերյալ քննարկումների ծավալման համար, նոր հետազոտական հարցեր առաջ բերել, ինչպես նաեւ ընդգծել որոշ հարցերն ավելի խորքային ուսումնասիրելու կարեւորությունն ու գուցե նաեւ նոր հետազոտության հիմք դառնալ:


իրավունքներ եւ ազատություններ
rights and freedoms
որոշումների կայացում
decision making
անկախ ապրել
living independently
ապաինստիտուցիոնալացում
deinstitutionalisation
հաշմանդամություն
disability
համայնքում ներառում
being included in the community